ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 26-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 26-ը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության փորձագետ Ռոզա Մկրտչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ

1. Հաշվետու ժամանակահատվածում մշակել (լրամշակել) եմ հետևյալ իրավական ակտերի նախագծերը (հաշվի առնելով շահագրգիռ նախարարությունների կարծիքները).

1) ««Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 302 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (ընդունվել է 2022 թվականի հոկտեմբերի 6-ին թիվ 1539-Ն որոշմամբ).

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները ամփոփվել և ուղարկվել է Կառավարություն).

3) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները ամփոփվել և ուղարկվել է Արդարադատության նախարարություն).

4) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ (ուղարկվել է շահագրգիռ մարմիններ).

2. Կարծիքներ եմ տվել կենսաթոշակային ապահովության վարչության քննարկմանը ներկայացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին և նպաստներին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի հետևյալ նախագծերի վերաբերյալ.

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հարապետության օրենքների նախագծեր.

2) Պաշտպանության նախարարությունից ստացված ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր.

3) Պաշտպանության նախարարությունից ստացված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

4) Արդարադատության նախարարությունից ստացված Ներքին գործերի նախարարության ձևավորմանն ուղղված՝ ««Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»,

««Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծեր.

5) Արդարադատության նախարարությունից ստացված «Պրոբացիայի ծառայության մասին», «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը

6) Արդարադատության նախարարությունից ստացված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ.

7) Արդարադատության նախարարությունից ստացված ««Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ.

8) Վարչապետի աշխատակազմից հանձնարարականով ստացված՝ «Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տալու կարգը և դրամական աջակցության չափերը, զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցելու կարգը և չափերը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող միանվագ դրամական օգնության չափը, վճարման կարգը և պայմանները սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 18-ի N 341 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 916-Ն որոշման

9) «Դատախազության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ.

3. Մասնագիտական եզրակացություններ եմ պատրաստել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին,

ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության առնչությամբ ստացված գրությունների և հարցումների վերաբերյալ (11 գրություն):

4. Քննարկել և վերլուծել եմ կենսաթոշակային ապահովության բնագավառին, ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության առնչությամբ քաղաքացիներից ստացված դիմումները և դրանց սահմանված կարգով տվել եմ համապատասխան ընթացք (25 դիմում):

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆ

26.10.2022